ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԵՐԳ ԳԱՎԱՌԻ ԵՎ ՀԵՐՔ (ՀԵՐՔԱՆ) ԲԵՐԴԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԺԲ դարի վերջում և ԺԳ դարի սկզբում Զաքարե ամիրսպասալարի, Իվանե աթաբեկի ու նրանց ժառանգների գլխավորությամբ մղված ազատագրական մարտերի արդյունքները հանրագումարի բերելիս Ստեփանոս Օրբելյանը հետևյալն է գրում. «Որք (Զաքարեն և Իվանեն —Հ. Մ.) բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յՄռանայ մինչև ցներքին Բասեն և Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ։ Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառնի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՋարէք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՋարբերդ։ Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ»[1]։ Պատմիչի ավանդածը, հանգամանալի լինելով հանդերձ, Զաքարյանների երկու սերնդի, այդ տոհմի տարբեր ճյուղերի ազատագրական վաստակի ամփոփումն է, ինչպես խոստովանում է ինքը պատմիչը. «Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան, սակայն զհասարակն սոքա առին և որդիքն իւրեանց. և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»[2]։ Օրբելյանը իր ավանդած իրադարձությունները չի արձանագրել ժամանակագրական կարգով, սակայն հնարավոր է աշխարհագրական որոշակի խմբավորման ենթարկել նրա թվարկած տեղանունները։ Այսպես, արևելքում (Բարկուշատ) և արևմուտքում (Մժնկերտ) սահմանային բերդերը նշելուց հետո արձանագրված են հյուսիս-արևմտյան (Կարս) ու հարավ-արևմտյան (Վաղարշակերտ) ծայրակետերը, այնուհետև, դարձյալ արևելքից-արևմուտք գծով, անվանվում են Արաքսի ափամերձ Կաղզվան և Սուրբ Մարի (Սուրմարի) բերդաքաղաքները։ Շիրակի և միջնաշխարհի քաղաքներն ու գյուղաքաղաքները ևս (Անի, Ամբերդ, Բջնի, Գառնի, Դվին) պատմիչը թվարկում է արևելքից-արևմուտք կարգով։ Ինչպես և սպասելի էր, մատենագիրը իր հայրենի երկրամասի բերդերի գրավումը հիշատակում է առանձին, թվարկումը կատարելով Որոտան գետով՝ վերից վար գծով։ Շատ դժվար է հստակ սկզբունքներ նշմարել տեղանունների «Գարդման»-ով սկսվող մասում, որտեղ ամենից սակավ հայտնին, անշուշտ, «Հերթ»-ն է։ Այս տեղանվան նկատմամբ հետաքրքրությունը առանձնակի է նաև այն պատճառով, որ այն տարբեր ձևերով է հանդիպում Ստեփանոս

---

[1] Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 391—392։

[2] Նույն տեղում, էջ 392։ Այս հանգամանքը անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ԺԳ դարի մեր մյուս պատմիչների նույնաբնույթ վկայություններին դիմելիս ու ավելի մեծ հավատ ընծայել թվագրվող վիմագիր արձանագրություններին, թեև դրանցից Հաղարծնի հայերեն արձանագրությունը (տե՛ս «Դիվան հայ վիմագրության». պրակ VI, կազմեցին Ս. Ավագյան, Հր. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 22—24) և Թեժառուքի վրացերեն արձանագրությունը (տե՛ս Պ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները*, Երևան, 1977, էջ 119), Զաքարյանների իսկ կողմից թողնված լինելով հանդերձ, թվարկման բնույթ են կրում և միայն մոտավոր թվագրման հնարավորություն են ընձեռում։